

## **Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողով. Հանձնառություններ**

Ուսանողի վարքագծի կանոնակարգի շրջանակում Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովն ուսումնասիրում է Համալսարանի ցանկացած անդամի կողմից ներկայացված բողոքները և ներկայացնում առաջարկություններ այն բողոքների լուծման վերաբերյալ, որոնք համարվում են հետագա քննության ենթակա:

Ուսանողի վարքագծի կանոնակարգի համաձայն՝ բոլոր բողոքները պետք է ուղարկվեն հետևյալ էլ. հասցեին՝ [codeofconduct@aua.am](mailto:codeofconduct@aua.am):

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Ուսանողի վարքագծի կանոնակարգը՝ [policies.aua.am](http://policies.aua.am), <http://policies.aua.am/policy/101>

**Գաղտնիության պահպանման պարտավորություններ:** Դասախոսակազմը, աշխատակազմը և ուսանողները, որոնք համաձայնում են անդամակցել Ուսանողի վարքագծի և էթիկայի հարցերով մշտական հանձնաժողովին, պարտավորվում են պահպանել տեղեկատվության գաղտնիությունը:

Հաշվի առնելով գործընթացում ներգրավված կողմերի հանդեպ հարգանքը՝ Հանձնաժողովի բոլոր անդամներն ու ենթադրյալ խախտման կողմերը պարտավոր են պահպանել տվյալ գործին առնչվող բոլոր մանրամասների գաղտնիությունը, մասնավորապես, կողմերի անունները, ենթադրյալ խախտման փաստերը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից իրականացված ցանկացած հաղորդակցություն կամ առաջարկություն: Ցանկացած փաստաթուղթ, որը պարունակում է տեղեկություն ենթադրյալ խախտման վերաբերյալ (ներառյալ կողմերի անունները), պետք է պահպանվի գաղտնի:

Հաշվի առնելով գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը՝ միաժամանակ ապահովելով արդար և ամբողջական քննություն ենթադրյալ խախտման վերաբերյալ՝ Հանձնաժողովի անդամները պետք է սահմանափակեն հետաքննության շրջանակը միայն Ուսանողի վարքագծի կանոնակարգի ենթադրյալ խախտմամբ և ձգտեն նվազագույնի հասցնել այն վկաների թիվը, որոնց պետք է հրավիրեն:

Ես գիտակցում եմ, որ Հանձնաժողովում իմ ներգրավվածության արդյունքում ինձ կարող է հասանելի լինել, և ես կարող եմ օգտագործել գաղտնի տեղեկատվություն: Գաղտնի տեղեկատվություն է համարվում անձին նույնականացնող և ուսանողների, դասախոսների և աշխատակիցների վերաբերյալ հնարավոր զգայուն տվյալներ պարունակող տեղեկատվությունը: Այդ տեղեկատվությունն ինձ հասանելի է դառնում Հանձնաժողովում իմ ներգրավվածության արդյունքում:

Ես հասկանում եմ, որ այն տեղեկատվությունը և խոսակցությունները, որոնց ես կարող եմ հասանելիություն ունենալ, կրում են գաղտնի բնույթ և պահանջում մասնագիտական պատասխանատվություն: Ես ընդունում և հասկանում եմ, որ Հանձնաժողովի անդամները պատասխանատու են իրենց աշխատանքային գործընթացում կիրառվող տեղեկատվության գաղտնիության պահպանման համար:

Ես ընդունում եմ իմ պարտավորությունը՝ չբացահայտելու կամ պատճառ չհանդիսանալու, որ բացահայտվի որևէ տեղեկատվություն, որի մասին կարող եմ տեղեկացված լինել ցանկացած պահի: